ՔՐԻՍՏԻՆԵ ՏԱՆԱՋՅԱՆ
ՀՊՄՀ դասախոս
«Շախմատ» գիտահետազոտական
ինստիտուտի գիտաշխատող

ՇԱԽՄԱՏՆ ԱԶԱՏԱԶՐԿՎԱԾՆԵՐԻ ՀԱՄԱՐ. ՍՏՈՐՈՒՄՆԵՐ ՇԱՐԺԱՌԻԹՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՐԿՄԱՆ ՇՈՒՐՋ

Աշխատանքն ուղղված է «Շախմատը հանուն ազատության» մրցաշարի հետազոտության արդյունքների վերլուծությանը: Այստեղ անդրադարձ է կատարվում մրցաշարի արդյունավետությանը, մրցաշարի ընթացքում մասնակիցների հուզական ապրումներին: Շախմատի տեղի, դերի բացահայտումը դատապարտյալների կյանքում արտացոլվում է հետազոտության տվյալների մեջ: Այս մրցաշարը կարող է դառնալ շախմատի մարզական, մշակութային և սոցիալական ներուժի բացահայտման հարթակ:

Հիմնաբառեր- մոտիվացիա, ինքնորոշում, սոցիալական ներառում, ինքնավարություն, կոմպետենցիա, վերաինտեգրում:

Ներածություն

«Շախմատը հանուն ազատության» նախագիծը մրցաշարերի շարունակական շարք է, որը կազմակերպվում է որոշակի պարբերականությամբ դատապարտյալների շրջանում: Սույն աշխատանքը նպատակ ունի բացահայտել շախմատային մրցաշարերի կարևորությունը, տեղն ու դերը դատապարտյալների կյանքում: Այս առնչությամբ «Շախմատը հանուն ազատության» մրցաշարի ավարտին պարբերաբար իրականացվել են ուսումնասիրություններ բացահայտելու դատապարտյալների՝ մրցաշարին մասնակցության դրդապատճառները, նրանց հոգեվիճակը և ապրումները, վեր հանելու դատապարտյալների սպասումները և ակնկալիքները մրցաշարից, ստանալու փաստական բնույթի տեղեկատվություն մրցաշարերին մասնակցության, նախապատրաստական, ընթացիկ և կազմակերպչական գործընթացների մասին, ցույց տալու մրցաշարի ուժեղ կողմերը, ռիսկերը, ազդեցությունը միջավայրի վրա, ինչպես նաև շախմատային մշակույթի, պոպուլյարիզացիայի պոտենցիալը: Աշխատանքում անդրադարձ է արվում այդ ուսումնասիրությունների որոշ ասպեկտներին:

Սկզբնական շրջանում (2021թ.) իրականացվել են քանակական հետազոտություններ նաև այլ երկներում: Ձեռք բերված տվյալները ընհանրական վերլուծվել են: Ստորև ներկայացված են տվյալ հետազոտությունների խնդիրներն արտահայտող որոշ գրաֆիկներ՝

Գծապատկեր 1. Ի՞նչն եք կարևորում այս իրադարձության մեջ (%):



Գծապատկեր 2. Ինչպե՞ս կբնութագրեք Ձեր զգացողությունները մրցաշարի ընթացքում (%):



Գծապատկեր 3. Թվարկեք այն միջոցները, որոնք բավականաչափ լավն էին նախապատրաստվելու համար (%):



2024-2025 թվականներին իրականացված հետազոտության առանցքն է դիտարկել մասնակիցների՝ շախմատային մշակույթ ներառվելու ներքին մոտիվացիաները, շախմատի՝ որպես սոցիալական ներառման գործիքի վերածվելու գործընթացը:

Մեթոդաբանություն

Նշված նպատակին հասնելու համար իրականացվել է սոցիոլոգիական հետազոտություն խորին հարցազրույցի մեթոդով, ինչպես նաև կիրառվել է ծրագրային վերլուծական գործիք՝ Ֆեյս Ռիդեր, որով գնահատվել և վերլուծվել են մասնակիցների հույզերն ու ապրումները հատուկ նկարահանված վիդեո կադրերի միջոցով: Որոնց վերաբերյալ որոշ տվյալներ ներկայացված են տորև.

Մասնակից Գ.Պ.



Մասանակից Ա.Հ.



Հարցազրույցներից և տվյալ «Face reader» գործիքի միջոցով ձեռք բերված տվյալները ենթարկվել են բովանդակային մշակման, ապա նկարագրական և համադրական վերլուծության սոցիալական ինքնորոշման տեսության համատեքստում:

Հետազոտության արդյունքներ և քննարկում

Սոցիալական ինքորոշման տեսությունն իր մեջ ամփոփում է մի քանի ենթատեսություններ, որոնցից մեկն օրգանիզմային ինտեգրացիայի տեսությունն է: Այն բացատրում է, թե ինչպես է արտաքին մոտիվացիան աստիճանաբար ներքնայանցվում և տանում դեպի ինքնավար վարքագծի[1]: Այսինքն՝ մարդը կարող է սկսել որոշակի վարքագիծ արտաքին ազդեցությամբ, բայց ժամանակի ընթացքում այն դառնում է ինքնավար:

Այս հանգամանքն ակնհայտորեն դրսևորվում է «Շախմատը հանուն ազատության» մրցաշարին մասնակցող դատապարտյալների շրջանում: Դրա մասին վկայում են հետազոտության մասնակիցների պնդումներն առ այն, որ սկզբնական շրջանում, մրցաշարերի կազմակերպման առաջին տարիներին նրանք մասնակցություն են ցուցաբերել, կարծելով թե խրախուսանքներ և պատժի հնարավոր թեթևացումներ կունենան հաղթանակի դեպքում:

Սակայն հետագա փուլերում, երբ այդ ակնկալիքները չիրականացան, մասնակցությունը շարունակում են՝ շախմատ խաղալու մշակույթի պահպանման և մրցաշարերի նախապատրաստական գործընթացներին մասնակցելու ներքին մղումով:

Մասնակիցների այդ **ներքին մղումը** բազմաշերտ է. ոմանք շարժվում են **հայրենիքը ներկայացնելու ցանկությամբ և հպարտության գիտակցությամբ**, ոմանք **ինքնազարգացման ձգտումով**, իսկ մյուսները՝ ազատ **ժամանակի արդյունավետ օգտագործման համոզմունքով**: Կան մասնակիցներ, ովքեր մանկուց ծանոթ են խաղին, և այդ շարունակականությունն ինքնին դառնում է ներշնչանքի աղբյուր: Շախմատն այս համատեքստում հանդես է գալիս ոչ միայն որպես հոբբի, այլև որպես **ինքնության դրսևորման գործիք**. մարդը իրեն տեսնում է ոչ թե որպես ազատազրկված անձ, այլ՝ որպես «շախմատիստ»:

Մեջբերենք հարցվածներից մեկի խոսքերը «Ես ինձ անասելի իրական եմ զգում, երբ կալանավայրում քայլելիս լսում եմ՝ ասում են հետևիցս մեր շախմատիստն եկավ, էդ ժամանակ ես ոչ թե դատված մեկն եմ, այլ ես եմ»:

Սոցիալական ինքնորոշման տեսությունը շեշտադրում է ոչ միայն դրդապատճառների քանակը, այլ նաև մոտիվացիայի որակը: Այս տեսանկյունից հետազոտության շրջանակում շեշտադրում են ստանում հետևյալ հարցերը՝

- ինչու՞ եմ ես գտնվում այստեղ,
- ինչու՞ եմ ես խաղում շախմատ,
- արդյո՞ք ես սիրում եմ շախմատ խաղը, թե ինձ գրավում է միջոցառումը,
- արդյո՞ք ես կիսում եմ Շախմատի փիլիսոփայության հիմքում ընկած արժեքներն ու գաղափարները:

Այս հարցադրումները արտահայտում են ինքանավարության տարբեր աստիճաններ: Եվ ամենաբարձր աստիճանում մասնակիցը շախմատը համարում է իր ինքնության մի մասը՝ կիսելով շախմատի փիլիսոփայության արժեքներն ու ընկալելով շախմատը՝ որպես իր ես-ի անբաժանելի մաս:

Մեջբերենք « Շախմատը դարձել է իմ կյանքը, ես առանց շախմատի չեմ կարող այլևս պատկերացնել ինձ»:

Բացի ինքնավարության գաղափարից, «Շախմատ հանուն ազատության» մրցաշարի շրջանակներում կարծես ռեալիզացվում են սոցիալական ինքնորոշման տեսության հիմքում ընկած ելակետային մյուս կարիքները՝ **ինքնուրույնության, կոմպետենցիայի կարիքը և կապի կամ հարաբերությունների կարիքը**:

Հատկապես անազատության և սահմանափակումների մեջ գտնվող անձանց համար անհրաժեշտ է ինչ որ կերպ զգալ և ռեալիզացնել վերոնշյալ կոմպետենցիայի պահանջմունքը, որի էությունը սեփական կյանքի և իրականության վրա ազդելու

www.ardaradatutyunjournal.com

հնարավորության մեջ է: Այս կարիքը ենթադրում է, որ սուբյեկտն իր գործողությունները ընկալում է որպես իրական և շոշափելի ազդեցություն ունեցող գործընթաց, որի միջոցով արտահայտվում և իրագործվում է նրա կամքը որոշակի վերահսկողության ներքո:

Եվ երբ խաղի ընթացքում կամ շախմատի պարապմունքների ժամանակ ազատազրկված անձը կարողանում է հաղթել կամ վերլուծել իր սխալը, նա զգում է, որ տիրապետում է իրավիճակին և կարող է զարգանալ: Սովորեցնելով համբերել, վերլուծել, սխալներից դասեր քաղել՝ շախմատը մասնակիցների համար դառնում է **կոմպետենցիայի կարիքը բավարարելու միջոց**, հաղթանակները բարձրացնում են կարևոր լինելու զգացումը: Իսկ պարտության փորձառությունն ընկալվում է որպես **ինքնաճանաչման** հնարավորություն: Խաղից հետո տրվող հարցերը («ինչո՞ւ շտապեցի, ինչո՞ւ սխալվեցի, ի՞նչ կարող էի անել այլ կերպ...) ցույց են տալիս **ինքնավարության աճող աստիճան**. մասնակիցները ոչ թե արտաքինից պարտադրված են վերլուծել, այլ իրենք են ցանկություն ունենում հասկանալու իրենց ընտրությունները: Շախմատը մասնակիցների համար վերածվում է հոգեբանական և կրթական գործիքի: Եվ շատերը ընդգծում են պարտության փորձառությունը՝ այն դիտարկելով, ոչ թե որպես ձախողում, այլ որպես կյանքում գործած սխալների խորհրդանշական արտացոլում:

Միաժամանակ սա ամրապնդում է **/վարպետության/ կոմպետենցիայի զգացումը**, քանի որ յուրաքանչյուր սխալ դիտվում է որպես նոր փորձ: Այսպիսով, ինքնավերլուծությունը դառնում է այն մեխանիզմը, որը միաժամանակ բավարարում է երկու կարիք՝ ազատ ընտրություն անելու կարիքը և արդյունավետ լինելու վստահությունը. դա կերտում է «ես կարող եմ սովորել» համոզմունքը՝ բարձրացնելով **սեփական կարողությունների նկատմամբ վստահությունը**: Այս հանգամանքը չափազանց կարևոր է հատկապես անազատության մեջ գտնվող անձանց համար, քանի որ մեղմում է պասիվության և կախյալության դրսևորումները, ինչպես նաև նվազեցնում է անօգուտության և հուսահատության զգացողությունները:

Հաջորդ կարևոր հանգամանքն այն է, որ մրցաշարերին մասնակցությունը փոխում է դատապարտյալների **սոցիալական ընկալումը**՝ ինչպես նրանց սեփական ինքնընկալման, այնպես էլ շրջապատի կողմից ընկալման մակարդակում: Ընտանիքի անդամները դրականորեն են արձագանքում այս փոփոխությանը՝ նշելով, որ նրանց հարազատի առօրյան դարձել է ավելի հագեցած և իմաստալից: Որոշ դեպքերում ընտանիքը հանրային տարածքում սկսում է ընկալվել ոչ թե որպես հանցագործի, այլ որպես շախմատիստի հարազատներ:

Սա կապերի ու հարաբերությունների վերահիմաստավորման կարևոր պահ է. Մասնակիցները կարևորում են իրենց ընտանիքների ու շրջապատի դրական արձագանքը: Երբ նրանց ընտանիքներին այլևս չեն ներկայանում որպես «հանցագործի հարազատներ», այլ՝ որպես «շախմատիստի» ծնողներ կամ հարազատներ»: Մեջբերենք՝ «...երջանիկ եմ զգում, երբ տեսակցության ուղեկցելիս լսում եմ, ասում են՝ շախմատիստի ծնողներն ենք, ուզում ենք երեխուն տեսնել»:

Նկատելի է, որ շատ փոքր քայլերով կառուցվում է նոր սոցիալական փոխհարաբերություն: Դատապարտյալները կարողանում են իրենց կյանքը կապել ոչ թե մերժված անցյալի, այլ նոր ձեռքբերումների հետ: Սա կարող է դառնալ այն կամուրջը, որը թույլ կտա ազատազրկվածին ապագայում ինտեգրվել և գտնել իր տեղը սոցիումում: Սոցիալական ինքնորոշման տեսանկյունից սա **կապվածության կարիքի բավարարման դասական օրինակ է**:

Մասնակիցների համար կարևոր է ոչ միայն անհատական հաջողությունը, այլև ընդհանուր նպատակի շուրջ միավորվելու զգացումը: Մասնակիցների դիտարկումներից պարզ է դառնում, որ մրցաշարի ամենահիշարժան պահերը նրանց համար կապված են կոլեկտիվ ապրումների՝ համատեղ ուրախության, թիմային համախմբվածության և փոխադարձ հպարտության զգացման հետ:

Նրանք ցանկանում են ինքնուրույն նախաձեռնություններ իրականացնել՝ ստեղծել ինքնագործ միություններ, հանդես գալ որպես մարզիչներ, առաջարկել նոր պայմաններ: Շախմատը ընկալվում է որպես ուղեկից նաև ազատության մեջ. ոմանք մտադիր են շարունակել խաղալ ակումբներում, մյուսները՝ դառնալ մարզիչներ: Սա վկայում է **ինքնավարության կարիքի բավարարման մասին**. նրանք ուզում են իրենց ձեռքում ունենալ ոչ միայն մասնակցի, այլև նախաձեռնողի դեր: Այս մոտեցումը տեսանելի է դառնում, .երբ արտաքին մղումներից շարժվող վարքագիծը փոխարինվում է ներքին մոտիվացիայով.

Եթե նախկինում հնչում էր «մեզ պարապմունք տվեք» խնդրանքը, ապա այժմ արդեն ձևավորվում է «մենք ինքներս կկազմակերպենք պարապմունքներ և անհրաժեշտ պայմաններ» մոտեցումը: Շախմատ հանուն ազատության մրցաշարի պարբերական փուլերը կարող են ուրույն տեղ ունենալ:

Տարբեր տարիներին իրականացված հարցումների արդյունքները ցույց են տալիս, որ շախմատիստ դատապարտյալների ընկալմամբ՝ շախմատը նպաստում է այնպիսի արժեքների ձևավորմանը, ինչպիսիք են հավասարակշռվածությունը, նորարարական մտածողությունը, քննադատական վերլուծությունը և համբերությունը:

Վերջիններիս մեջ բոլոր տարիներում իրականացված հետազոտությունների ընթացքում մեծա-

գույն կարևորություն է միշտ ստացել **համբերության որակը**, որն ըստ դատապարտյալների իրենց կյանքի այս և մնացած բոլոր փուլերում ամենակարևորն է:

Մեջբերենք նրանցից մեկի խոսքերը «Համբերությունը միշտ է պետք մարդուն, մեզ առավել ևս. վերջերս պետք է ներկայացվեի միջամտությանս ձևը փոխելուն, սակայն արդեն երրորդ անգամ է այդ գործընթացը հետաձգվում է, բայց քանի որ շախմատն ինձ սովորեցրել է համբերել, սպասել ու սպասողական քայլեր կատարել, ես այլ դատապարտյանելի պես նյարդային ապրումներով և սթրեսներով չեմ արձագանքել այդ իրողությանը: Սա այն մեծագույն որակն է, որ շախմատը զարգացրել է իմ մեջ»:

Իսկ ըստ մասնագետների, ովքեր աշխատում են դատապարտյալների հետ կրթական և սոցիալական վերականգնողական տարբեր ծրագրերի շրջանակներում, շախմատը ազդում է նաև **որոշումներ կայացնելու կարևորագույն որակի** բարելավման վրա. սա կարևոր է հատակապես կրկնահանցագործների առումով:

Մեջբերենք «Իմ կարծիքով կրկնահանցագործություն կատարողների մոտ որոշում կայացնելու հմտությունը շատ ցածր է: Կրկնահանցագործության թիվը բարձր է մանր հանցանքների դեպքում, որոշումներ կայացնելու դժվարություններն են որ բերում կրկնահանցագործություններին, և կարծում եմ, որ շախմատը կարող է որոշում կայացնելու ունակությունը բարձրացնել»:

Պետք է նկատենք որ հանցագործների մոտ նկատվում է գործառնական ֆունկցիաների **խանգարումներ**, որոնք արտահայտվում են որոշումներ կայացնելու շտապողականությամբ, առանց հետևանքներ գնահատելու կարճաժամկետ շահերի առաջնորդությամբ և սոցիալական, բարոյական նորմերի հանդեպ պատասխանատվության ցածր շեմով: Գործառնական ֆունկցիաների՝ **ուղեղի բարձրակարգ կոգնիտիվ կարողությունների**, հիմնական բաղադրիչներն են[2] աշխատանքային հիշողությունը, զսպող վերահսկողությունը, կոգնիտիվ ճկունությունը, պլանավորումը և կազմակերպումը, խնդիրների լուծումը, ինքնամոնիթորինգը, ուշադրությունը, ժամանակի կառավարումը: Մի շարք ուսումնասիրություններ փաստում են որ շախմատը բարենպաստ ազդեցություն է ունենում ոչ միայն որոշումներ կայացնելու, խնդիրներ լուծելու ունակության վրա, այլև վերոգրյալ բոլոր բաղադրիչների զարգացման վրա, որոնք թույլ են տալիս մարդկանց **կառավարել իրենց վարքը, մտածել երկարաժամկետ և ընդունել նպատակային որոշումներ**[3]:

Եզրակացություն

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ «Շախմատը հանուն ազատության» մրցաշարը դատարապարտյալների համար դառնում է ոչ միայն ժամանցային գործունեություն, այլև խորքային վերափոխման հզոր գործիք: Շախմատը նպաստում է արտաքին մոտիվացիայի աստիճանական ներքնայնացմանը՝ ձևավորելով ինքնավար վարքագիծ, ուժեղացնելով կոմպետենցիայի զգացումը և ընդլայնելով սոցիալական կապերի շրջանակը: Մասնակիցների փորձառությունները վկայում են, որ շախմատը նրանց կյանքի մեջ հանդես է գալիս որպես ինքնության վերակառուցման միջոց՝ «դատապարտյալ» սոցիալական պիտակից աստիճանաբար անցում ապահովելով դեպի «շախմատիստ» ինքնընկալում:

Այսպիսով, շախմատը քրեակատարողական հաստատություններում վերածվում է ինքնորոշման բազմաշերտ գործիքի. մասնակիցները ինքնուրույն են ձևավորում իրենց ներգրավվածության ռազմավարությունները, զարգացնում ինքնավերլուծության կարողությունները, խաղի միջոցով տեսնում են սեփական կարողությունների աճը և ձեռք բերում նոր որակի սոցիալական հարաբերություններ կառուցելու փորձառություն: Արդյունքում, շախմատը հանդես է գալիս որպես կրթական, հոգեբանական և սոցիալական բարձր ներուժ ունեցող արդյունավետ վերականգնողական ռեսուրս անազատության մեջ գտնվող անձանց համար, որը կարող է նպաստել նրանց հետագա սոցիալական վերաինտեգրմանը:

www.ardaradatutyunjournal.com

[1] Ryan, Deci 2017.
[2] Bahri Roudposhti, Al Abdwani, 2024, 39–45.
[3] Baig, Rostan, Saurina, 2025, 83 – 90.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Bahri Roudposhti R., Al Abdwani T. Executive Function and Learning Outcomes: A Systematic Review, Journal of Cognition, Emotion & Education, Vol. 2, No. 2, 2024, 39–50.
2. Deci E. L., Ryan R. M. Self-Determination Theory: Basic Psychological Needs in Motivation, Development, and Wellness, New York, 2017, 756 p..
3. Baig M., Rostan C., Saurina C. Effect of a Chess Training Program on the Development of the Executive Functions in Primary School, Psicología Educativa, Vol. 31, No. 2, Girona, 2025, 83–90.
4. Widacki J., Widacki M., Wójcik B., Szuba-Boroń A. Recognition of Emotions by Analyzing Facial Expressions with FaceReader (Noldus) vs Detection of Deception by Polygraph Examination: A Pilot Study, European Polygraph, Vol. 19, No. 1, Warsaw, 2025, 31–58.

Кристине Танаджян
Преподаватель АГПУ
Научный сотрудник научно-исследовательского института “Шахматы”
Армянского государственного педагогического университета (АГПУ)

РЕЗЮМЕ

Шахматы для заключённых: размышления о социальном и психологическом конструировании мотивации

Работа направлена на анализ результатов исследования шахматного турнира «Шахматы во имя свободы». В статье рассматривается эффективность турнира, а также эмоциональные переживания участников в ходе его проведения. Роль и значение шахмат в жизни осуждённых отражаются в эмпирических данных исследования. Данный турнир может стать платформой для раскрытия спортивного, культурного и социального потенциала шахмат.

Ключевые слова: мотивация, самоопределение, социальная инклюзия, автономия, компетентность, реинтеграция.

Christine Tanajyan
Lecturer at ASPU
Researcher at the “Chess” Scientific Research Institute

SUMMARY

Chess for convicts: reflections on the social and psychological construction of motivation

This study is aimed at analyzing the research findings of the chess tournament “Chess for Freedom.” The article examines the effectiveness of the tournament as well as the emotional experiences of participants during its implementation. The role and significance of chess in the lives of convicted individuals are reflected in the empirical data of the study. The tournament can serve as a platform for revealing the sporting, cultural, and social potential of chess.

Key words: motivation, self-determination, social inclusion, autonomy, competence, reintegration.

Ընագիրը ներկայացվել է 27.11.2025թ.
Ընդունվել է տպագրության 12.01.26թ.